



սեպ  
լու  
ա  
ս

399 (Կ7. 925)

Ս. Ղանձանյան

Ֆիզիոգ. գիտուր. թեկնածու

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ  
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵջ<sup>1</sup>

1

Ամուր ու ճաստատուն են թումանյանի գրական վաստակի՝ ժողովրդական բանահյուսության հետ ունեցած կապի անձնական-կենսագրական արտները: Այդ արմատները խորը թաղված են մեր հեղինակի ժողովրդական բառ ու բանով հարուստ հայենի հողում, նրա ծննդավայր՝ լոռավաշարիում: «Ես լուսեցի եմ ու էն գլխից, ոչ պիտի ափակածով», սիրել և հետաքըրքը վերըկել եմ հեքիաթներով, լեզենդներով, առավներով և շատերն անգիր գիտեմ զեռ մանկուց»<sup>2</sup>, գրում է թումանյանը մի առիթով:

Սակայն, որքան էլ ամուր լինեն որևէ հեղինակի ստեղծագործության՝ ժողովրդական բանահյուսության հետ ունեցած կապի կենսագրական հանդամանքները, սխալ կլիներ գերազնահատել գունաց դերը: Այդ հանդամանքները, ինչպես միշտ, ներկա գեպքում էլ ունենալով իրենց որոշ նշանակությունը՝ որոշիչ չեն:

Շատ ավելի կարեռ են այս հարցում հասարակական-գաղափարական, ինչպես նաև գրական-գեղարվեստական գործոնները, որոնցով և հիմնականում պայմանավորված է այս կամ այն հեղինակի ստեղծագործության՝ ժողովրդական բանահյուսության հետ ունեցած կապը: Այդ գործոնների համեմատ, ատրքեր գրուների մոտ, պատմական տարրեր ժամանակաշրջաններում ժողովրդական բանահյուսությունը հանդես է դալու այլազան եղանակներով ու երանգներով և ունի տարբեր քանակ ու որակ: Ենքենք մի քանի օրինակ հայ գրականությունից: Այսպես՝ եթե Արավյանի համար ժողովրդական բանահյուսությունը եղել է հիմնականում հին կրերա-ֆիոդալական գրականությանն ու գրաբար լեզվին հակադրվելու և նոր աշխարհիկ-ժողովրդական գրականություն ու լեզու ստեղծելու կարևոր միջոցներից մեկը, Պոռշյանը ժողովրդական ստեղծագործությունը ծառայեցրել է գերազանցութեն իրքի մի օժանդակ միջոց հայ գյուղացու հոգեւոր կյանքը, նրա կենցաղը, ծեսերն ու հավատալիքներն ավելի լավ պատկե-

<sup>1</sup> Զեկուցում՝ կարգացված 1943 թ. մարտի 23-ին, Հովհաննես Թումանյանի մահվան 20-րդ տարեդարձի առթիվ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Գրականության և լեզվի ինստիտուտի և Հայաստանի Սովետական Գրողների Միության կազմակերպած հաշվեկողյին:

<sup>2</sup> Հովի. Թումանյան, ոչ գրական ոչնչությունները քննադատ, «Մշակ», 1909 թ., № 170:

քերու համար, եթե Աղայանը ժողովրդական հեքիաթների օգնությամ Ֆարծել է իր մանկավարժական-բարոյախոսական գաղափարները, դուկյանը մտցնելով իր գրվածքների մեջ ժողովրդական բառ ու բան տեղային ազգագրական գույն ու երանդ է տվել իր երկերին: Մեր քանի գրողների համար (Բաֆֆի, Հովհ. Հովհաննիսյան) ժողովրդակ ստեղծագործությունը եղել է նրանց հասարակական-քաղաքական գալու նանքները բացահայտելու ձևերից մեկը: Ուրիշները (Ձրիկ, Վ. Այգելցի) Փոլկորին մոտեցել են իրեւ առանձին սյուժեների և արտահայտչական միջոցների մի շահմարանի: Ունեցել ենք հեղինակներ (Ավ. Խաչակրյան), որոնք ժողովրդական բանահյուսությունն օգտագործել են իրենց անհատական հոգեվիճակը, անձնական հույզերն ու մտորումներն արտահայտելու համար:

Եղել են գրողներ էլ, որոնք ժողովրդական բանահյուսությունից վերցված ու մշակված նյութերի մեջ և այդ նյութերի միջոցով՝ բացահայտելով իրենց հարազատ ժողովրդի ազգային ոգին ու ստեղծագործական կարողությունները, միաժամանակ դրսեւրել են իրենց հասարակական դավանանքներն ու գեղարվեստական շնորհքը:

Այս կարգի հեղինակների ամենացայտուն ներկայացուցիչն է մեզ մոտ Հովհաննես Թումանյանը: Թումանյանը նրա ստեղծագործության ժողովրդայնության հիմնական շարժիչ ուժերից մեկն է: Զափաղանց բնորոշ և ուշագրավ է այս տեսակետից մեր հեղինակի կարծիքը ժողովրդական բանահյուսության մասին՝ իրեւ գրականության համար կենսական ու կարեսը մի աղբյուրի: 1894 թվին գրած իր մի հոդվածում, խոսելով հայ ժողովրդի ազգային ոգու ծնունդը, մեր նախնիների կյանքի ու բարքերի արտահայտություն ավանդական առասպեկտների և զրույցների մասին, Թումանյանը գրում է. «... Ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրութը, որ զորանա»<sup>1</sup>:

Խորապես համոզված լինելով այդ բանում, և լավ ծանոթ լինելով հրաշալ աղբյուրին, Թումանյանն իր գրական գործունեության վաղ շրջանից սկսում է խմել այդ աղբյուրի ակունքներից, խմելով՝ ուժ է առնում, զորանում, ու հայրենի կաթնաղբյուրի ջրից հզորացած՝ մեր ժողովրդական հոյակապ վեճի և իր լավագույն երկերից մեջի հերոս Սասունցի Դավթի նման՝ դառնում հայ գրականության հոկաններից մեկը:

## 2

Ժողովրդական բանահյուսության օգտագործման խնդրում աշխատանքի առաջին կարեսը բաժինը Թումանյանի համար հանդիսացել է նյութի ընտրության գործը, Հայկական (և ոչ միայն հայկական) ավանդական հարաւատ բանահյուսության բանավոր ու գրավոր ամբարներից—տասնյակ ու հարյուրավոր ազգագրական ժողովածուներից և բանահյուսական գրքերից, արվեստագետի իր բարձր ճաշակով և բուն ժողովրդական գրողի մեջ հոտառությամբ Թումանյանը պրատել ու ընտրել է այնպիսի նյութեր, որոնք բնորոշ ու տիպական լինելով՝ դուր գտային իր ժողովրդի հոգուն և խո-

<sup>1</sup> Հովհ. Թումանյան, Բորչալվում (Ճանապարհորդական տպագորություններ), «Հորի-ղոն» հանդես, 1894 թ., զիբը Ա.

սեին նրա սրտի հետո, Նա հայտաբերել ու օգտագործել է այնպիսի երգեր, ու լեզենդներ, հեքիաթներ ու վեպեր, առակներ ու զրուցներ, որոնց մեջ արտացոլված էր իր հարազատ ժողովրդի բախտն ու վիճակը, նրա աշխատանքն ու հանգիստը, ազատասիրական ոգին ու պայքարելու անհողողությամքը, նրա տանջանքն ու տենչանքը, ուրախությունն ու վիշտը, թափիծն ու լավատեսությունը, նրա վառ հավատքը լավագույն ապագայի նկատմամբ<sup>1</sup>:

Ժողովրդական բանահյուսությունից վերցված վերոհիշյալ մոտիվներն ու թեմաները հարազատ էին թե իրեն՝ Թումանյանին և թե այն ժողովը՝ դիմունումներին ու ճաշակին, որի համար նա ընտրում էր դրանք:

Սակայն, նյութի ընտրությունը, որքան էլ այն կարեոր լինի հասարակական և գաղափարական տեսակետից, ժողովրդական բանահյուսության օգտագործման ուղղությամբ մեր հեղինակի կատարած աշխատանքի ներածական մասն է միայն: Նրա խակական և բուռ ստեղծագործությունը դրսերպիկ է այդ նյութերի մշակման գործում: Այստեղ է, որ վոովին արտահայտվել է Թումանյանի աշխարհայացքն ու հոգեբանությունը, նրա հասարակական-քաղաքական հայացքները, փիլմառփայական մտորումները, նրա գեղարվեստական ճաշակն ու վարպետությունը:

Ֆոլկլորի օգտագործման խնդրում Թումանյանն ունեցել է մի հիմնական, առաջնորդող սկզբունք—այնպես մշակել ժողովրդական նյութերը, որպեսզի դրանք չկորցնելով սկզբնապերյուրի համեն ու հոտը, ալելի ևս ազնվանան ու կատարելագործվեն:

Ուշագրավ է այս տեսակիսից մեր հեղինակի հայացքը ժողովրդական հեքիաթի մշակման մասին: «...Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը և պատմում: Եվ շնորհքը հենց եղ պատմելու մեջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, որ և՛ գեղեցիկ դուրս գա, և՛ ժողովրդականի համեն ու հօտը կացը» (Ընդգծումը մերն է. Ա. Ղ.):<sup>2</sup>

Այս է եղել Թումանյանի առաջնորդող սկզբունքը ոչ միայն հեքիաթների, այլև բանահյուսական մյուս բոլոր տեսակների ու ժանրերի մշակման խնդրում:

Ենելով այս հիմնական սկզբունքից, Թումանյանը Փոլկլորային տար-

<sup>1</sup> Ժողովրդական բանահյուսությունից Թումանյանի վերցրած հիմնական ու էական թեմաներն ու մոտիվներն են.

ա) Արտաքրին նվաճողների ճնշման և նրանց զեմ հայ ժողովրդի մղած ազատազրական պայքարի թեման («Թաղամորն ու չարչին», «Ոլբը», «Թմկաբերդի առումը», «Աղաղըու վանը», «Սասոնցի Դավիթ»):

բ) Սոցիալական անհավասարության և զասակարգային պայքարի թեման («Դժարտարեր», «Եթելոքն ու հիմարը», «Տերըն ու ծառան»):

գ) Աշխատանքի ու աշխատավորի թեման («Գութան», «Կալի երգը», «Խնոցի», «Ասկու կարասը», «Գութանի երգը»):

դ) Բնության թեման՝ կապված մարզու և նրա աշխատանքի հետ («Գալնան առավոտ», «Փոքրիկ երկարգործ», «Մանուկն ու ջուրը»):

ե) Արտօ թեման՝ հարակից մի քանի մոտիվներով («Աղջկա սիրտը», «Փարվանա», «Ալթամարտ»):

զ) Փիլմառփայական մոտիվներ («Էսպես չի մնա», «Քեֆ անողին քեֆ չի պակսի», «Քաջ նազար»): Եվ այն:

<sup>2</sup> Հովի. Թումանյան, Աչ զբական ոչնչությունները քննադրատ, «Մշակ», 1909 թ. № 169:

բեր նյութեր մշակել և օգտագործել է տարբեր եղանակներով ու մեթոդներով:

Իր հոգվածներից մեկում նա անուղղակի կերպով շարադրել է Փոլկորային նյութերի մշակման մեթոդների ու եղանակների մասին իր հայցքը:

Անդրադառնալով բանահավաքի և բանաստեղծի միջև եղած տարբերության հարցին, Թումանյանը գրում է. «Բանահավաքն ուրիշ է, բանաստեղծն ուրիշ. մեկի գրածի պատասխանատուն ժողովարդն է, մյուսինը—ինքը. ...Ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները դրում են—մրտեղ են լսել, բրդ են լսել, ովէ է պատմողը, քանի՞ տարեկան է և այլն, և այլն, որովհետև էն արձանագրություն է, պրատակող է, և պարտավոր են նույնիսկ նրա սիսակներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան. Իսկ մշակումի, գրական լեզվակ պատմածի, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, չափական ձևի վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առած»<sup>1</sup> (Ընդգծումները մերն են. Ա. Դ.):

Այսպիսով, տեսնում ենք, որ ըստ Թումանյանի՝ Փոլկորային նյութերի մշակումն ընթանալու է, հիմնականում, ժողովրդական ստեղծագործությունը գրական լեզվակ պատմելու, միևնույն երկի (հեքիաթ, վեպ, դրույց և այլն) տարբեր վարիանտներից ընտրելով ու փոփոխելով մի նոր ներկայական ու լավ բնագիր կազմելու, ժողովրդական արձակը չայոյի վերածելու ուղղությամբ:

Ժողովրդական բանահյուսության նյութերի մշակման իր ստեղծագործական աշխատանքներում Թումանյանը կիրառել է վերոհիշյալ մեթոդներն ու եղանակները:

Փորձենք համառոտակի բնութագրել դրանք:

### 3

Ժողովրդական բանահյուսության նյութերի ստեղծագործական յուրացման առաջին, համեմատաբար պարզ, ձևը Թումանյանի մոտ հանդիսանում է այդ նյութերի մշակումը, գրանց սկզբնադրյուրների մեջ մացվող երբեմն մեծ, երբեմն էլ փոքր փոփոխությունների միջոցով:

Այս կարգի մշակումներ են մեր հեղինակի երգերից՝ «Սոխակի վիշտը», «Կաքավի երգը», «Արագիլը», «Կաքավի գովքը», «Մանուկն ու ջուրը», «Նորից եկան էն հավերը», «Աղվեսը», «Փոքրիկ երկարագործը», «Քաջ կիվիվը», «Գալրնան առավոտը», «Ճնճղուկները», «Գութանը», «Կալի երգը», «Ծիտը», «Ենուոցին», «Կոռունկները» և «Փիտոն». հետիւրթներից՝ «Ռոկու կարսը», «Քիհի անողին քեփ չի պակսի», «Բարեկենդանը», «Խելոքն ու հիմարը» և «Կացին ախաղերը»:

Վարպետ նկարչի նման, որը մտնելով իր արվեստակիցների աշխատանոցը, մեկմեկ մոտենում է նրանց տակավին անավարտ նկարներին և վրձինի մի քանի շարժումներով նոր երանգ ու իմաստ է տալիս այդ նկարներին, Թումանյանը մտել է ժողովրդական ստեղծագործության մեծ արվեստանոցը և նույնն արել ժողովրդական անանուն բանասացների ու

<sup>1</sup> Հավի. Թումանյան, Զայց գրամբյանիզմ ու ևս, Տէրիզոնա, 1913 թ. № 125.

գուշանների, ատղանդավոր, բայց անմշակ գործերի նկատմամբ: Մեծագույն ճաշակով ու վարպետությամբ՝ նա կրծատել է իր ընտրած երգերի ու հեքիաթների ավելորդ մասերը, սեղմել ձգձգված տեղերը, վերականգնել աղածաված կտորները, հանել է ավելորդ կրկնությունները, կատարել նոր և կարևոր հավելումներ, — դրանով իսկ ուրույն փայլ ու միտք հաղորդելով այդ երգերին ու հեքիաթներին:

Ստեղծագործական այդ միջամտությունը երբեմն արտահայտվել է առանձին բառերի ու տողերի հավելումով ու հապավումով, երբեմն էլ ամբողջական մասերի, տների և տասնյակ տողերի ու բառերի փոփոխությամբ:

Զնայած տարբեր գործերի վրա կատարված ստեղծագործական աշխատանքի քանակային նկատելի տարբերություններին, որ ամեն անգամ բխել է մշակվող նյութի պահանջներից, այդ աշխատանքի արդյունքը, որպեսի տեսակետից, միշտ բարձր է եղել: Իրեն օրինակ վերցնենք Թումանյանի «Փիսոն» մանկական հայտնի ոտանակորը և «Արագիլ» վերնագրով երդը — առաջինն իրեք նմուշ համեմատաբար փոքր փոփոխման, իսկ երկրորդը՝ մեծ, և համեմատենք դրանք իրենց սկզբնաղբյուրների ներությունը:

Տեսնենք նաև «Փիսոն»: Ժողովրդական-մանկական մի խաղիկ է դա, տպագրված բանահավաք Տ. Վարդանյանի «Ժողովրդական անգիր բանաստեղծություններ» վերնագրով բանահյուսական ժողովածուի մեջ (Թիֆլիս, 1901 թ.) «Կատու» վերնագրի տակ: Չուպալը բարձր այն Թումանյանի «Փիսոն»-ի հետ և տեսնենք, թե ինչպես է մշակել մեր հեղինակը և ինչ է դուրս եկել նրա մշակումից:

## ԿԱՏՈՒ

Փիսոն, փիսոն մըլավան,  
Թավըն թողեց, գընաց Վան.  
Լեզուն թաթղան, էրկան պոչ,  
Ինչ որ ուղեց՝ ըսին՝ նչ:

Փիսոն էլավ փախչելու,  
Գընաց խալիծ գորնալու.  
Շերեփը զարկին գանկին,  
Գըդալը զարկին ճակտին:

Փիսոն, փիսոն մլավան,  
Թավըն թողեց, փախավ Վան,  
Լեզուն թաթղան, երկար պոչ,  
Ինչ որ ուղեց, ասին՝ նչ:

Փիսոն գնաց գողենող,  
Փորը գատարկ, սիրտը դոզ,  
Դունչը մեկնեց կովկթին,  
Շերեփն իջավ ճակտին:

Հիմնականում հարազատ մնալով իր սկզբնաղբյուրին, Թումանյանը գրականացրել է ժողովրդականի բարբառային որոշ բառեր («Էրկան»-ը դարձրել է «Երկար», «ըսին»-ը՝ «ասին»): առաջին տան երկրորդ տողի «գընաց» բառը գարձել է «փախավ», որ ավելի սապական է փիսոյի համար: Փոփոխել և վերագառապերել է երկրորդ տան բոլոր տողերը, որոնք թե բովանդակությամբ և թե ձևի տեսակետից բավական պակասավոր են (հակասական են, իմաստի անտեղի կրկնություն ունեն և այլն): բանահավաքի «Կատու» վերնագրի տեղ դրել կատվի «Փիսոն» ժողովրդական-մանկական գեղեցիկ հորջորդումը:

Այս առերևույթ անշան փոփոխությունների հետեւնքով մեր աղագրական-բանահյուսական ժողովածուներից մեկում մոռացված կիսաղճատ ժողովրդական խաղիկը դարձել է իմաստալից ու գողարիկ մի սապակոր — մեր մանուկների սիրված երգերից մեկը:

Համեմատաբար ավելի շատ են «Արագիլ»-ի մեջ մտցված փոփոխությունները: «Փիոռ»-ի նման ոս ևս ժողովրդական մի երգ է, տպագրված վենստիկյան «Բազմավեպ» հանդիսի 1858 թվի Հաներից մեկում (էջ 305), և ապա, արտատպված՝ Մ. Միանսարյանի «Քնար հայկական»-ի մեջ (Մուկվա, 1868 թ., էջ 150—151): «Երգ արագիլ» վելնագրի տակ Ահա այս:

### ԵՐԳ ԱՐԱԳԻԼԻ

Արագիլ բարով եկիր,  
Դուն արագիլ բարով եկիր.  
Ըմե գարնան նըշան բերիր,  
Դուն մեր սըրտիկ զըվարթ արիր:

Արագիլ, մեզի իջիր,  
Դուն արագիլ մեր տուն իջիր,  
Մեր խացի ծառին բունիր,  
Դուն մեր սիրուն:

Արագիլ քե գանգըտիմ,  
Հայ արագիլ, քե գանգըտիմ.  
Իմ հազար ցավեր ասիմ  
Սըրտիս ցավեր հազար ցավ:

Արագիլ, եր գընացիր,  
Դու մեր ծառեն եր գընացիր,  
Զուլումաթ հովեր արին,  
Ծըդուն ծըդկները չըցուցին:

Վարագա սարեն բըռնած,  
Էն վարագա սարեն բըռնած,  
Զյուն իջներ ըմեն ծածկեր,  
Կանաչ դաշտիկը ցուրտ աներ:

Արագիլ մեր դրախտին ձյունիկ  
Պատեր մեր դրախտիկ.  
Կանաչուն մեր վարդնիս  
Ցամքեր պաղեն ը ձըմըռեն:

### ԱՀԱ և Թուժանյանի «Արագիլ»-ը:

#### ԱՐԱԳԻԼ

Արագիլ բարով եկար,  
Հայ, արագիլ բարով եկար.  
Դու մեզ գարնան նշան բերիր,  
Մեր սրտերը ուրախ արիր:

Արագիլ երթ գընացիր,  
Դու մեզանից երթ գընացիր,  
Հա վշեցին լուրք ու բորան,  
Ծիլ ու ծաղիկ ամեն ասրան:

Արագիլ բարով եկար,  
Հայ, արագիլ բարով եկար.  
Բունըր շինիր էն հին ծառին,  
Մեզ մոտ մնան ամբողջ տարին:

Պահպանելով սկզբնաղբյուրի ոչ թե բովանդակությունը, այլ վերջինիս հիմնական մոտիվը միայն, որ է՝ արագիլի գարնան խորհրդանիշ լինելու հանգամանքը, այն, որ նրա գալստյամբ բացվում են ծառ ու ծաղիկ, և հեռացումով մեռնում բնությունը, մի բան, որ արտահայտված է երգի առաջին և չորրորդ տարերի մեջ, թուժանյանը կրծատել է սկզբնաղբյուրի մնացած հինգ աները (2, 3, 5, 6, 7), որոնք առանձին առանձին վերցրած լավ լինելով հանդերձ՝ օրդանապես չեն մերվում երգի վերօնիշյալ հիմնական մոտիվի նետ, խախտում են նրա կառուցվածքը, դարձնում այն

ձգձգված, նեղացնում են նրա ընդհանուր նշանակությունը՝ կապելով որոշ տեղագրական միջավայրի հիմ («Վարագա սարեն բռնած...»), Բացի այս՝ նա իր կողմից ավելացրել է մի տուն, որով երգիչը խնդրում է արագիլն ամբողջ տարին մնալ իրենց մոտ. Ակզրից և վերջից չորս անգամ կրկնել է բնագրի առաջին տողը (թեթև բառափոխությամբ), որը մի բարեմաղթություն է արագիլի գալույան առթիվ («Արագիլ բարով եկիր...»), գարձնելով այն մի տեսակ լայտ մոտիվ ամբողջ երգի համար. բարբառը վեր է ածել գրական-ժողովրդական լինվի. վերականգնել է երգի մի երկու տողերի խախտված չափն ու աղոտված հանգը:

Այս ամենի հետևանքով բովանդակությամբ բավական ճապաղ և կատարման արվեստի (կառուցվածք, հանդավորում, տաղաչափություն) տեսակետից համեմատաբար անմշակ ժողովրդական երգը գարձել է հավաք ու մշակուն մի գործ:

Նույն ձևով են կերտված այս խմբի թե՛ չափածո և թե՛ արձակ բոլոր մյուս գործերը:

#### 4

Ժողովրդական բանահյուսության նյութերի մշակման երկրորդ, համեմատաբար բարդ, ձևը Թումանյանի մոտ հանդիսանում է այդ նյութերի տարբեր վարիանտների հիման վրա մի նոր գրական երկ ստեղծելու գործը:

Այս կարգի մշակումներ են մեր հեղինակի երգերից՝ «Կաքավի ողբը», հեթիարներից՝ «Չախչախ թագավորը», «Եղիմական ծաղիկը», «Քաջ Նազարը», «Ծիտը», «Անրան Հուռին», «Անխելք մարդը», «Պոչատ աղվեսը», «Ուլիկը», «Կիկոսի մահը», «Կոնատ աղջկկը» և «Սասունցի Դավիթ» վեպը:

Միևնույն ժողովրդական նյութի մի շարք տարբերակներից Թումանյանն առաջին հերթին մեծ ուշադրությամբ ընտրում է գրանցից ամենալավը, բնորոշն ու տիպականը. Այնուհետև նա կրնատում, հեռացնում է վերջինին այն մասերը, որոնք անհարազատ են ու խորթ բռն ժողովրդական ստեղծագործության համար ընդհանրապես, և տվյալ նյութի համար՝ մասնավորապես. Ապա նա դիմում է մյուս վարիանտներին, ընտրում վերջիններիս ուշագրավ մոտիվներն ու մոմենտները և դրանով խակ վերաստեղծում հիմնական վարիանտը:

Խմբագրական-ստեղծագործական այս աշխատանքի ընթացքում Թումանյանը ձգտում է վերականգնել բռն ժողովրդական սկզբնաղբյուրը, որը հաճախ, զանազան պատճառներով, աղավաղված ու աղճատված է ինում բանասացների կամ երգիչների կողմից: Դրա հետ միասին նա սկզբնաղբյուրների մեջ իր կողմից մտցնում է նոր մոտիվներ ու մտքեր, նոր կերպարներ ու պատկերներ և դրանով խակ վերաստեղծում ժողովրդականը:

Ինչպես նախորդ բաժնում, այսուղ էլ Թումանյանը հարացատ է մոտավ իր հիմնական սկզբունքին՝ աշխատելով չշեղվել ժողովրդական ստեղծագործության ոգուց ու ռճից: Իրեք օրինակ վերցնենք մեր հեղինակի այս կարգի մշակումներից ամենատիպիկն ու լավը—«Քաջ Նազարը»: Ժողովրդական տարածված մի հեթիաթ է դա, որի տարբերակները կարելի է դառնել մի շարք ազգերի մոտ: Թումանյանի արիվլում պահպանված մի ձեռագիր թերթից երկում է, որ նա իր հեթիաթը մշակելիս նկատի է ունեցել դրա զանազան ազգերի վարիանտները, թվով մոտ 20 հատ (հեղյուր

թերթի վրա մի առ մի նշված են դրանց աղբյուրները): Վերջիններիս համեմատությունը «Քաջ Նազար»-ի հետ պարզում է Թումանյանի կատարած գրական-ստեղծագործական աշխատանքի բնույթը:

Իբրև հիմնական բնագիր՝ «Քաջ Նազար»-ի համար Թումանյանը վերոհիշյալ բոլոր աղբյուրներից ընտրել է հայկական գարիբանտներից մը զլորը ապագրված է Գ. Սրվանձնայանի «Համովհ-հոտով» վերնագրով Փոլկուրային հայտնի ժողովածուի մեջ (1884 թ., Կ. Պոլիս) «Դժիկոն» վերնագրի տակ: Եվ ահա թէ ինչու: Միակ գարիբանտն է դա, որի մեջ հերոսի բնութագիրը լրիվ համապատասխանում է հեքիաթի հիմնական գաղափարին, որ է միապետներին ծաղրելլ: Մինչդեռ մյուս բոլոր գարիբաններում Քաջ Նազարը գուրս է բերված որպես վախկոտ, բայց խորամանկ ու ճարպիկ մի անձնավորություն, որն օգտվում է գիրվաճների հաջող բերումից, և իր խորամանկության ու ճարպիկության շնորհիվ ոչ միայն ազատվում է վտանգներից, այլև հասնում իշխանության, փառքի ու հարուստության,—Սրվանձտյանի գարիբանտում Դժիկոյի հաջողությունների հիմնական շարժիչը պատհարն է, որովհետու նա ոչ միայն վախկոտ է, այլև բավական անշնորհք ու անձարակ: Իր հեքիաթի համար իբրև հիմք ընդունելով գաղափարական տեսակետից այս ավելի հետևողական գարիբանար, Թումանյանն ազատել է Դժիկոն-Նազարին ճարպիկության ու խորամանկության նրա ունեցած ամենաչափ շորջովիններից իսկ, նրա բարձրացման միակ գործոնը գարձնելով դիպվածը, դրանով իսկ իր կողմից ավելի ևս ընդզեկով ժողովրդական հեքիաթի մեջ թագավորների հասցեին եղած ծաղը, և արտահայտելով այն ժիաքը, թե՛ անցյալում տիրող հասարակական կարգերի շնորհիվ իշխանության բարձունքներին հաճախ նստած են եղել քաջ Նազարներ, որոնք թագի ու զանի են տիրացել ոչ թէ իրենց իմաստությամբ ու քաջությամբ, այլ բախտի կամ դիպվածի բերումով:

Սրվանձտյանի գարիբանարից է Թումանյանը վերցրել իր «Քաջ Նազար»-ի ոչ միայն հիմնական գաղափարն ու հերոսի բնութագիրը, այլև հեքիաթի ընդհանուր սյուժեն, գլխավոր գործող անձինք, կարևոր գեղքերը—կրծատելով, լրացնելով և փոփոխելով գրանք մասամբ ըստ այլ գարիբանների, մասամբ էլ իր կողմից: Այսպես, մինչդեռ Դժիկոն ունի երկու այժեմի կով, Նազարի սեփականությունը մի էլ է միայն. Թումանյանն այս փոփոխությունը կատարել է օգտվելով իրեն հայտնի ադրբեջանական մի գարիբանարից, որտեղ Նազարը, եթե կարելի է այսպես ասել էշավոր է: Մինչդեռ Դժիկոն առում է, որ ինքը մի հարվածով սպանում է յոթին, Նազարի սպանածների թիվը հասնում է հազարի: Այս փոփոխությունն, ամենայն հավանականությամբ, Թումանյանն ինքն է կատարել, երևի դրա համար դրդում ստանալով նույն բանավոր գարիբանարի հետևյալ հանգավոր բանաձեց-«Նազար փահլւան զարբընդա զըրիւնի ազար փահլւան» (=մի զարկով քառասուն ջարդող Նազար փահլւանը), աղբրեջաններեն «ազար» (=ջարդել) բառը փոխարինելով հայերեն համահանգ «Հազար»-ով, դրանով ոչ միայն հանգ ստեղծելով, այլև չափազանցության միջոցով ավելի ևս ուժեղացնելով իր ծաղը: Թումանյանի հեքիաթի բավական կենդանի ու գունեղ կառըներից է վագրի միջադեմը, որը բացակայում է Սրվանձտյանի գարիբանատում: Այս կտորը մեր հեղինակը վերցրել է «Քաջ Նազար»-ի կովկապայան մի գարիբանարից, իր կողմից մանրամասներով ու ծաղկեցնելով

ու բարեկասության տեղմ ու դերը Թումանյանի սանդու

«Պահպատճերյուր, բայց

այս Այդ վարիանուր տպագրված է „Сборник сведений о Кавказе“ պահպատճերյուր, բայց մական ազգագրական ժողովածուի 2-րդ գրքում „Богатырь Незнай“ վերնազրի տակ, Հեքիաթի ժողովրդական ոչ մի վարիանտի մեջ չկա ոչ Քաջնառարի երգը և ոչ էլ նրա ու նրա նազ յարի գովքը. Հայ ժողովրդական ու զերի ոճով հորինված չափածո այդ գողտրիկ կտորները պատկանում են Թումանյանի գրչին:

Այս և նման բազմաթիվ մեծ ու փոքր տարբերությունները, որ կան Սրբանձայանի «Դժիկո»-ի և Թումանյանի «Քաջ Նազար»-ի միջև, ցույց են տալիս ստեղծագործական այն կարեւոր աշխատանքը, որ կատարել է մեր հեղինակը տվյալ հեքիաթի բովանդակության վրա նույն ձևով Թումանյանը մշակել է նաև հեքիաթի արվիստը՝ նրա լեզուն, ոճը, կառուցցածքը և մյուս արտահայտչական միջոցները, Բարբառը վեր է ածել գրական լիզվի, առատորեն օգտագործելով ժողովրդական բառերն ու ոճերը. Ընդհանուր առմամբ գրականացնելով հեքիաթի ժողովրդական ձևը, բավական հարազատորեն պահպանել է ժողովրդական ասմունքի առանձնահատկությունները, և այլն և այլն:

Ստեղծագործական այդ մեծ ու բազմակողմանի աշխատանքի հետեւ վանքով ալիքի ևս ընդգծվել ու շեշտվել է ժողովրդական հեքիաթի հիմնական գաղափարը, հարստացել նրա սյուժեն, կրծատվել են ավելորդ ու ոչ բնորոշ տեղերը, մշակվել է նրա արվեստը:

5

Ժողովրդական բանահյուսության նյութերի գրական մշակման երրորդ կարեւոր ձևը Թումանյանի մոտ հանդիսանում է բանահյուսական արձակ ժանրի ստեղծագործությունների վերածումը բանաստեղծական չափածոյի:

Այս կարգի մշակումներ են մեր հեղինակի լիցենզիաից՝ «Ախթամարը», «Թագավորն ու չարչին», «Անբծած հարսը», «Պողոս-Գևորգոսը», «Եսպես չի մնա»-ն, «Արծիվը ու կաղնին», «Փարվանան», «Լուսավորչի կանթեղը», «Որբը», «Անրախտ վաճառականները», «Աղջկա սիրտը», «Երկինք ու երկիրը», «Օրօրոցագողը», «Թմկաբերդի առումը», «Մի կաթիլ մեղրը», «Աղամու վանքը», առակներից՝ «Մուկիկի մահը», «Չարի վերջը» և «Անրուն կլուն»:

Ինչպես նախորդ երկու բաժիններում, այսուղեւ Թումանյանի ստեղծագործական աշխատանքն ընթացել է յուրահատուկ ու հետաքրքրիր ուղիներով: Դա սովորական իմաստով արձակ դործերի վերածում-փոխադրություն չէ բանաստեղծական չափածոյի, այլ բավական բարդ ու բազմազան ստեղծագործական մի պրոցես, որի մեջ սինթեզալիցիոնը են մեր հնդինակը՝ ժողովրդական բանահյուսության նյութերի մշակման տարրեր ձևերն ու մեխոդները:

Այսպես, որին Փոլկուրային արձակ նյութ չափածոյի վերածելիս՝ մի դեպքում, եթե այդ նյութը հայտնի է հիմնականում միայն մեկ վարիանտով, Թումանյանը մտցնում է նրա մեջ մեծ կամ փոքր փոփոխություններ, յուրօքի վերաստեղծում բովանդակությունն ու արվեստը: Մշակման այս տիպի բնորոշ օրինակ է հայտնի «Մի կաթիլ մեղրը»: Ժողովրդական մի առակ է դա, հեքիաթատիզ մի փոքրիկ պատմվածք, որ ունի եկաղերը № 3.—2

Քերթը;՝ և ուրիշ ազգեր (հնդիկները և այլն); Սրա հայկական վարիանտք ապագրված է Ն. Մառի «Сборник притч Вардана» վերնագրով բանասիրական նշանափոր աշխատության մեջ (Բ. մաս, էջ 298—299)։ «Կաթ մեղու պատճառ պատերազմի» վերնագրի տակ Թումանյանը, հավանորեն, նկատի է ունեցել հենց այս վարիանտը։ Անա այն. «Այր ոմն ունեէր խանութ և մեջ, կու ծախէր, և կաթեաց կաթ մի ի մեղրէն ի գետին. և պիծակ մի նստալ ի վերայ նորայ. և կատու վաղեաց և էառ զպիծակն. և յետ նորա շուն վաղեաց և էառ զկատուն. և խանութին տէրն եղարկ զշունն և սպանեաց. և կայր այն գեղին զբացութիւն զեղ մի, որ շունն յայն գեղիցն էր. իբրև իմացաւ շան տէրն եթէ խանութպանն զիւր շունն սպանեաց, յայն ժամ եկն և սպանէ զմանութպանն։ Յետոյ յարեան Բ. կողմանց զեղացիքն արարին պատերազմ մեծ ընդ միմեանս. և եղեւ կոտորում ի մէջ նոցա. զի մնաց երկու կողմանց մարդ մի կենդանի վասն կաթ մի մեղրի համար»։

Մշակելով ժողովրդական այս առակը, Թումանյանը, ինչպես ասված է, մի կաթիլ մեղրը դարձել է մի ծով մեղր։ Զափածո բանաստեղծական խոսքով վերապատճելով այն, նա ոչ միայն բոլորովին նոր ձեռով է հնչեցրել ժողովրդական բավական անարվեստ առակը, սրել և բացահայտել նրա մեջ թաքնված ժողովրդի երգիծանքը, այլև իր կողմէց կարենոր նորմություններ է կատարել նրա բովանդակության մեջ։ Նա որոշակի կերպով ակնարկել է ազգամիջյան արյունահեղ պատերազմների և դրանց ծանր հետևանքների մասին, շեշտել աշխատավոր ժողովրդի զայրույթն այդ պատերազմների հեղինակների գեմ։

Մի ուրիշ դեպքում, որեւէ արձակ բանահյուսական գործ չափածոյի վերածելիս, եթե այն հայտնի է ոչ թե մեկ, այլ մի քանի վարիանաներով, Թումանյանն ուսումնասիրում է վերջիններս, կատարում զրանց ստեղծագործական համահավաք խմբագրությունը, իր կողմէց մտցնում կարենոր հատավումներ ու համելումներ, գնում նրա վրա իր ինքնուրույնության ուժեղ կնիքը։

Այս տիպի մշակման ցայտուն օրինակ է մեր հեղինակի լեգենդներից «Զարի վերջը», ժողովրդական մի առակ է զա (կենդանական մի վեպ), որի վարիանաները տպագրված են տարբեր ժողովուրդների Փոլլորացին ժողովածուներում։ «Զարի վերջը» ձեռագրի վրա Թումանյանի ձեռքով նըշված են հետեւյալ աղբյուրները։ Ա. Հայկունի, «Ժողովրդական առակներ» (Պաղարշապատ, 1907 թ.), „Сборник Материалов по описанию местностей и племен Кавказа,, (39-րդ գիրք), „Сказки африканск. народов“, որտեղ կան այս առակի երեք վարիանաները։ Հիմնականում հարազատ մնալով իր սկզբնաղբյուրների սյուժեատային ատաղձին, Թումանյանը որոշ փոփոխություններ է մտցրել գրանց գործող անձանց միջ (գելհավքը կամ ազակին գարձել է կլու և այլն), չափածո, հանգավոր ձև տվել արձակ առակին (տեղական միայն պահերով արձակը), ընդարձակել է դիալոգները, վերջում ափեացրել առասվի խոսքը չարի վերացման մասին, առակին տվել «Զարի վերջը» վերնագիրը։

Մի երրորդ դեպքում, որեւէ արձակ բանահյուսական նյութ չափածոյի վերածելիս, եթե զա չունի քիչ թե շատ ամբողջական մի բնագիր, և ոչ էլ վարիանաներ, այլ ժողովրդական ստեղծագործության մի ուշագրավ պատասխի է միայն, տաղանգավոր ճարտարապետ-վերականգնողի և, որը հողի հասա շերտի տակից հանված հին նշանավոր հուշարձանի

Նա կը տեսնի էն մըշտավառ ատպանդա-  
ջահը կախված երկընքից,  
Սահս՝ ասծո աչքը պայծառ  
Հըսկում է ցած երկընքից:

6

Ժողովրդական նյութերի բնագրերի գրական մշակման վերոհիշյալ հիմնական երեք ձեւերից բացի, ժողովրդական բանահյուսությունը թումանանի ստեղծագործության մեջ օգտագործված է նաև մի երկու այլ ուրություններով: Ֆոլկլորը եղել է նրա ինքնուրույն որոշ երկերի աղջական ատեղծագործությունից, թումանյանն այդ ստեղծագործության ատաղճի հիման վրա հղանում է իր ինքնուրույն ոյուժեն ու ֆարուղան, զարգացնում այն սեփական պլանով, գնում նրա մեջ նոր գաղափարներ ու մտքեր և մարմնավորում դրանք ինքնուրույն գրական կերպարների ու ձեւերի մեջ: Այս կարգի գործ է թումանյանի «Հաղարան բլուլ»-ը, որը պետք է զառնար մեր հեղինակի գրական գլուխ-գործոցը, բայց որը, գժբախտաբար, մնաց չափարտված:

Ժողովրդական բանահյուսությունն այնուհետև թումանյանի համար ծառայել է իրեւ որոշ մոտիվների ու մոմենտների փոխառության աղդյուր, իրեւ ստեղծագործության օրինակ: Ժողովրդի հյանքից վերցրած իր ինքնուրույն մի շարք գործերը հորինելով, նա մտցրել է զրանց մեջ բավականաշափ ֆոլկլորային ատրեւը, աշխատել է նմանվել ժողովրդական բանահյուսությանը, կիրառելով նրա ստեղծագործական ոճն ու մեթոդները: Այս ողով են հորինված նրա մի քանի լավագույն երկերը—«Մարոն», «Անուշը», «Լոռեցի Սաքոն», «Գութանի երգը»: Վերջիններիս համար թումանյանը չի ունեցել որևէ կոնկրետ ժողովրդական ակղջնազրյուր: Դրանց իրեւ հիմք կամ ատաղճ ծառայել են իրական, կենցազային ընույթի որոշ միջազգեակեր, որոնք տեղի են ունեցել մեր հեղինակի հայրենի աշխարհում և որոնց մասին նա լսել է իր հայրենակիցների պատմությունները: Ժողովրդական բանահյուսությունն այս գործերի մեջ օգտագործված է մի կողմից՝ ժողովրդական կենցազի նկարագրին ավելի լրիվ ու գունեղ գարձնելու և մյուս կողմից՝ այդ գործերի արտահայտչականությունն ուժեղացնելու համար: Նահապետական հայ զյուղի ծիսերն ու սովորությունները պատկերելի թումանյանը մեջ է բերում ծիսական և կենցազային կարգի՝ ժողովրդային կառուներ (հիշենք Համբարձման տոնի ժամանակ երգվող վիճակի երգերը «Անուշ»-ի մեջ, Մարոնի շիրմի վրա նրա մոր կողմից երգվող ոգո երգը «Մարո» պուեմի մեջ և այլն): Իր գեղարվեստական խոսքը ավելի գունեղ ու արտահայտիչ դարձնելու համար նա զիմում է ժողովրդական բառ ու բանին, առատորեն կիրառում է ֆոլկլորին հատուկ մետաֆորներ, սիմվոլներ, կրնություններ և այլն:

Ժողովրդական բանահյուսության վարպետ օգտագործման շնորհիվ թումանյանի վերոհիշյալ երկերն ըստ էության լինելով ինքնուրույն գրական գործեր, ստեղծում են ժողովրդական ստեղծագործության լավագույն նմուշների պատրանքը: Երբեմն նույնիսկ գդվար է լինում որոշել թե՝ որտեղ է վերջանում մեր հեղինակի անձնական ստեղծագործությունը և որտեղից սկսվում ժողովրդականը: Դրա ցայտուն օրինակն է թումանյանի

թերթիւն՝ և հիման վրա կարողանում է վերականգնել ոչ միայն եանուր տպագրութեանը, այդ կոթողի ընդհանուր տեսքը, այլև տալ նույնիսկ նրա նշանակաց այդ բարձրագույն բարձրությանը ժողովրդական ստեղծագործութեան այդ պատառիկի հիման վրա մեծ արվեստով վերականգնում է նրա աշխական անդամատ պատկերը, կամ ստեղծում մի նոր զործ, որ թերեւ երբեք գոյություն էլ չի ունեցել ժողովրդի մեջ, բայց եթե լիներ, այդպիսին միայն կարող էր լինել:

Այս կարգի մի շարք գործերից մեկն է Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» Ապարան անունն ստուգաբանող ժողովրդական ավանդության մի բեկոր է դա, որն իրեւ տողատակի ծանոթություն տպված է Գ. Հովհաննի «Փղանքներ» վերնագրով Փոլկլորային ժողովածուի մեջ (Թիֆլիս, 1892 թ.), Անա այս:

Խոսելով Ապարան անվան մասին, տեղացի գեղջուկներից մեկը հետեւ վայն է պատմել մեր բանահավաքին. «Սա Արարան չէ, Անպարան է, ու վհետեւ կուսափորչի արտասուբքով լիքը կանթեղը երկնքից անպարան կախված է «հաշաների» (գագաթների) մեջ. գորա համար էլ Ապարան են ասում: Այդ կանթեղը մշտավառ է և միայն արդարներին տեսանելի»:

Մշակելով ժողովրդական ավանդության այս բեկորը, Թումանյանը դարձրել է այն բանաստեղծական մի սքանչելի կոթոր: Նա զարգացրել է իր սկզբնաղբյուրի աղքատիկ բովանդակությունը, մանրամասնել վերջինիս զուսպ ու սեղմ բառերը, բացել ակնարկները, մացրել Հայաստանի բնության նկարագրի մի քանի բնուրոշ ու գեղեցիկ գծերը, ժողովրդական ավանդության կրոնական իմաստին ավել յուրովի մեկնաբանություն զիտելով այն իրեւ հայ ժողովրդի իր վառ ապագայի մասին ունեցած անսատն հավատքի արտահայտություններից մեկը: Անա թե ինչպես է ձեակերպել Թյումանյանն այդ մեկնաբանությունը իր հոգվածներից մեկում: «...Մեծ է մեր հավատը հայ ժողովրդի կուլտուրական ուժի ու նրա պայծառ ապագայի վրա, որ հենց ինքը հայ ժողովուրդին իր ապագային առասպեկտի մեջ նշանակցրել է մշտավառ կանթեղի, որ սրբազն Արագածի վերից կախված է երկնքի բարձրությունից ու ոչ մի ձևոք չի հասնի նրան, ոչ մի փոթորիկ չի հանգնի նրան: Նա հայ ժողովրդի հույսն է, անմարելի ու մշտավառ» («Հոգիզոն», 1912 թ., № 278):

Անա և այդ մեկնաբանության գեղարվեստական արտահայտությունը.

Կես գիշերին կանթեղը վառ  
Կախի է ընկած երկնքից,  
Լուսալորչի կանթեղն անմար  
Հայոց մըթնած երկնքից:

Կախի է ընկած առանց պարան  
Արագածի կատարին,  
Ու սեղանից հօսկայական  
Լույս է տալիս աշխարհին:

Լույս է տալիս երկնք դարեր  
Ու վառվում են միշտ անշեղ  
Սուրբի մաքուր արցունքները  
Ցուղի տեղակ նորա մեջ:

Ոչ մարդկային ձեռ կը հասնի  
ին ահավոր բարձունքին,  
Եվ ոչ քամին կը հանգըլնի՝  
Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խավարը  
Զընաշխարհիկ մեր երկրին,  
Երբ տիրում է ահն ու վախը  
Թույլ, կասկածու սըրտերին,

Ով անմեղ է լիքը սիրառ  
Ու հավատով անսասան,  
Ով նայում է վառ հույսերով  
Դեպի հայոց ապագան,—

«Բրգլ»: Վերջինս չունի ժողովրդական որևէ սկզբնաղբյուր, բայց ան է մեր բուն ժողովրդական լավագույն գութաներգերին: Իր որդի գործնորում Թումանյանը հանդես է գալիս իրեկ մի տաղանդապարդական գրող-բանասաց, որն իր ստեղծագործության մեջ կառաւմ է վարպետորեն միաձուլել մի կողմից՝ գրական արվեստի, և այս կողմից՝ ժողովրդական բանավոր խոսքի լավագույն հատկությունները:

7

Ժողովրդական բանահյուսության օգտագործման վերջին ձեր Թումանյանի մոտ հանդիսանում է այդ բանահյուսության նյութերի թարգմանության և փոխադրության գործը:

Բարձր կարծիք ունենալով իր հարազատ ժողովրդի ստեղծագործական կարողությունների, նրա լավմագարյան գունեղ ու հարուստ բանահյուսության մասին, Թումանյանը միաժամանակ ուսումնասիրել և գնահատել է նաև մյուս ժողովրդների բանավոր ստեղծագործությունը:

«Համբակի մեծամտություն» համարելով որոշ մարդկանց այն կարծիքը, ըստ որի՝ «ամեն լավ բան մերն է ու մեզանից է գուրս եկել», Թումանյանը գտնում է, որ բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց արժեքավոր բանահյուսական երկերը: Նա գրում է: «Հաճախ կը հիսութափեն էն մարդիկը, որոնք ուզում են անպատճառ էս կամ էն ժողովրդական ստեղծագործության—էպոսի, հեքիաթի, առակի և նման գործերի սկիզբն ու ծնունդը կապել բացառապես իրենց պատերի հայրենիքի հետ» («Հորիզոն», 1910 թ. № 125, 128): «Ամենքն էլ ունին նույն առակները, նույն առավելերն իրենց պանիրներով, նույն խորամանկ աղիսներն ու գայլերը, նույն թակարդները, նույն օձերն ու նույն գյուղացիները և այլն և այլն» («Հորիզոն», 1913 թ. № 135): «Ինչպես էս կամ էն զարձվածքը, էնպես էլ ամբողջ պատմություններ, անց են կենում աշխարհցաշխարհ, և ամեն աշխարհում, ամեն արկի տակ, ամեն ժողովրդի բերանում՝ առնում են մի ուրույն երանգ, համ ու հոտ: Եվ շատ անգամ նուրբ առանձնահատկություններն են, որ որոշում են մի ժողովրդի ստեղծագործությունը մյուսից, ոչ թե գործի ամբողջությունը» («Հորիզոն», 1910 թ. № 125, 128):

Այսպիսի հայացք ունենալով առանապակ ժողովրդական բանահյուսության մասին, Թումանյանը խտրություն չի դնում տարբեր ժողովուրդաների ֆուլկորի միջև: Հայկական բանահյուսության նյութերի հետ միասին իր ստեղծագործությունների համար նա նկատի է առնում նաև այդ նյութերի այլազդի տարբերակները և ըստ պահանջման նեզի օգտվում դրանցից: Բայց այս նա ընտրում, թարգմանում ու փոխադրում է զանազան ազգերի լավագույն Փոլիտրային ստեղծագործությունները: Բայց այլի են այն ժողովուրդները, որոնց բանահյուսությունն այս տեսակական գրանցից է մեր հեղինակի ուշագրությանը: Այսպես՝ ուսւական Փոլիտրից նա թարգմանել ու փոխադրել է նաև մի շաբթ հեքիաթներ ու զրույցներ՝ հնդկական բիլինաներից և երկու լավագույն հեքիաթ: Սնրական Փոլիլուրից երեք բնորոշ էպիկական հատվածներ սերբ ժողովրդական էպոսից: Թարգմանել ու փոխադրել է նաև մի շաբթ հեքիաթներ ու զրույցներ՝ հնդկական,

արաբական, ճապոնական, իռլանդական, իտալական, գերմանա-  
վուրդների ֆոլկլորից:

Ինչպես բանահյուսական նյութերի իր մշակումների մեջ, այս  
թուրմանյանը կատարել է նկատելի ստեղծագործական աշխատանք  
թարգմանություններն ու փոխազդրությունները շատ ուրիշ հեղինա-  
գործերի նման մեքենայական, անկյանք ու անարվեստ գործեր չեն: Դրա-  
վրա զբոշմված է մեր հեղինակի հանձարի կոփը, վիպելու նրա մեծ տաղան-  
դը: Թարգմանելով կամ փոխադրելով՝ թուրմանյանն աշխատել է տեղայնաց-  
նել հայացնել օտար նյութերը, կամ, ինչպես ինքն է ասում, հարմարեցնել  
դրանք մեր ժողովրդի «ինքնությանն ու մտածողության եղանակին»: Իզ  
դա միանգամայն հաջողվել է նրան: Թուրմանյանի շատ թարգմանությու-  
ներն ու փոխազդրությունները, եթե նրանց մեջ եղած մարդկանց ու վ  
րերի օտար անունները չինքնին, դժվար կլիներ տարբերել բուն հայ-  
կան համամման նյութերից:

Իր հողվածներից մեկում, խոսելով այն ճանապարհի մասին, որով  
գրով կարող է դառնալ մեծ ու համամարդկային և տեղ ունենալ  
հանուր զբականության մեջ, թուրմանյանը գրում է. «Մարդ որքան ամենի մոտիկ լինի իր երկրին ու ժողովրդին, որքան ավելի շատ խորանա ժողո-  
վըրդական ստեղծագործության մեջ, այնքան ավելի մեծ է ու համամարդ-  
կային. միայն էս ճանապարհով գրով կարող է տեղ ունենալ ընդհանուր  
գրականության մեջ»<sup>1</sup>:

Թուրմանյանն ինքն այս խոսքերի ճշմարտացիության լավագույն  
աղացույցներից է:

Անբաժանելիորեն կապված լինելով իր երկրի ու ժողովրդի հետ, խո-  
րը սուզվելով վերջինիս ստեղծագործության մեջ, նա դարձավ ոչ մի-  
այն մեր գրականության մեծագույն գեմքերից մեկը, այլև իր արժանի  
տեղը նվաճեց ընդհանուր գրականության մեջ:

1915 թ., պատերազմի դաշտից գրած իր նոթերում, հայ մեծանուն  
վիպասան Շիրվանզադեն պատմում է՝ թե ինչպես թուրմանյանը, որն այն  
ժամանակ հասուլ հանձնարարությամբ նրա հետ շրջում էր ճակատամերձ  
հայկական գյուղերում, կովի թոհի ու բահի մեջ չէր մոռանում զրի առնե-  
լու իր լավագույն գործերի համար ստեղծագործական նյութ ու տաղան-  
դանդիսացող ժողովրդի բանավոր ստեղծագործության առավել ուշագրավ  
նմուշները («Հազարան բլուլ և այլն»)<sup>2</sup>:

Մենք ևս այսօր, պատերազմի այս ահեղ օրերին, չենք մոռանում մեր  
ժողովրդի հոգեսր գանձերի խորը գնահատողին և վարպետ մշակողին:

Հավաքված զբական-գիտական այս ջերմ մթնոլորտում, մենք մեծա-  
րանքի խոսք ենք ասում նրա անմահ հիշատակին և ըստ արժանիույթ-  
գնահատում նրա անմեռ գործը:

A 31/2/17


<sup>1</sup> Տես՝ «Խորհրդային Հայաստան», 1939, № 88.

<sup>2</sup> Տես՝ «Զիթենի» գրական ժողովածու, Թիֆլիս, 1915 թ., էջ 81.



Հ  
Ը





A 31717